ԵԴ/10841/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 ապրիլի 2023թ. **ք. Երևան**

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Ս. Ուլիխանյանի, ծանոթանալով «Մովսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

ՊԱՐԶԵՑ

21.03.2023 թվականին «Մովսեսյան» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ քննչական կոմիտեի՝ ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարի 10.03.2023 թվականի թիվ 73-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը դատավորին է հանձնվել 22.03.2023 թվականին:

Դատարանը 27.03.2023 թվականին որոշում է ընդունել հայցադիմումը վերադարձնելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցադիմումի թերությունները վերացնելու համար առաջին ատյանի դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից: Եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Հայցադիմումը կրկին ներկայացվել է 06.04.2023 թվականին՝ հայցադիմումի վերադարձման համար հիմք հանդիսացած թերությունները շտկված:

Կրկին ներկայացված հայցադիմումը հանձնվել է դատավորին 12.04.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում [illegible] են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված [illegible] կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

«Մովսեսյան» ՍՊԸ-ի հայցադիմումը համարել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի վարույթ ընդունված սկզբնական ներկայացման օրը՝ 21.03.2023 թվականին և եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականին մայիսի 29-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային էջում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ**